

Թեմայի վերնագիրը՝

Հոսանքահարումից պաշտպանիչ սարքի
մշակում

Կազմակերպության անվանումը՝

ՀՀ ԿԳՆ «Հայաստանի պետական
ճարտարագիտական համալսարան
(Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ

Թեմայի ղեկավարը՝

Բաղդասարյան Մարինկա Քաջիկի

Առաջարկվում է մշակել շինարարությունում, գյուղատնտեսությունում, բաց հանքերում, ենթակայանի կառավարման համակարգերում, բնակելի տներում, օֆիսներում օգտագործվող միաֆազ կամ եռաֆազ լարման աղբյուրից սնվող էլեկտրասարքավորումների անվտանգ շահագործումն ապահովող պաշտպանիչ սարք և պատրաստել դրա արտադրականին մոտ նմուշը՝ դրանով իսկ ստեղծելով սարքի ներդրմանը միտված միջավայր:

Առաջարկվող հոսանքահարումից պաշտպանիչ սարքը հոսանքահարման վտանգի դեպքում անմիջականորեն կհոսանքազրկի էլեկտրասարքավորումը և միաժամանակ վտանգի մասին կազդարարի ձայնային/լուսային ազդանշանով: